



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 13.01.2023Թ. ԹԻՎ 2/4-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ» ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրջյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանջյանի, Կարեն Մեժլումյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման» կարգում (**այսուհետ նաև՝ Կարգ**) փոփոխություններ կատարելու հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 21-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի և Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 49-րդ ենթակետի պահանջներով,

միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Կարգի 93-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«93. Որակավորման քննությունների առաջին փուլի առաջին քաղաղրիչի՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության հավակնորդների համար հարցաթերթիկը պարունակում է խնդիրներ կամ թեստային առաջադրանքներ, որոնք առնչվում են՝

- 1) քաղաքացիական դատավարությանը.**
- 2) գործարքների անվավերությանը և դրա հետևանքներին.**
- 3) աշխատանքային վեճերին.**
- 4) սեփականության իրավունքի պաշտպանության վեճերին.**
- 5) վարչական դատավարությանը»:**

2. Կարգի 94-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«94. Որակավորման քննությունների առաջին փուլի առաջին

28 փետրվարի 2023թ.

թիվ 5/27-Լ

բաղադրիչի՝ քրեահրավական ուղղվածության հավակնորդների համար հարցաթերթիկը պարունակում է խնդիրներ կամ թեստային առաջադրանքներ, որոնք առնչվում են՝

- 1) հարցաքննության ձևերին և առանձնահատկություններին.**
- 2) խափանման միջոցների հետ կապված հարցերին.**
- 3) մինչդատական ակտերի իրավաչափության դատական բողոքարկմանը.**
- 4) քրեական վարույթում ապացույցներին և ապացուցման գործընթացին.**
- 5) քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներին»:**

3. Ինկորպորացված Կարգը տեղադրել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

**28 փետրվարի 2023թ.
թիվ 5/27-L
ք. Երևան**